

ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորանքի խոսքը Անկախության օրվա առթիվ

21.09.2020

Արմավիրի մարզի հարգելի բնակիչներ, սիրելի հայրենակիցներ,

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 29-րդ տարեդարձի առթիվ:

Տարեթվեր կան, որ ստեղծվում են ժամանակի պահանջով ու հրամայականով և հավերժանում են դարերի ու սերունդների համար: Հայ ժողովրդի պատմական կենսագրության մեջ բացառիկ կարևոր և որպես շրջադարձային իրողություն կմնա 1991 թվականի սեպտեմբերի 21-ը, երբ համայն հայությունը վերահաստատեց ազատ ու անկախ երկրում ապրելու իր կամքն ու վճռականությունը: Եվ այս պատմական իրադարձությամբ հայ ժողովրդի կյանքում նոր ուղի բացվեց, այն է՝ անկախության ուղին:

Սակայն բոլորս գիտենք, որ անկախությունը նվեր չտրվեց մեր ժողովրդին, այն ձեռք բերվեց բազում դժվարությունների, պատերազմի ու մաքառումների գնով: Ուստի այսօր պատեհ առիթ է մեր հարգանքն արտահայտելու անկախությունը կերտած մեր հայրենակիցների հանդեպ, խոնարհումը՝ հանուն անկախության ամրապնդման իրենց կյանքը զոհած հայ քաջերի հանդեպ, գնահատանքը՝ Հայոց սահմաններն անսասան պահող մեր զինվորների հանդեպ և հարգանքը՝ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու հանդեպ:

Ինչ խոսք, երկրի կառուցման, շենացման գործը չի կարող հստակ ժամկետներ ու սահմաններ ունենալ. դա շարունակական, առաջընթաց ապահովող և նոր հեռանկարներ ուրվագծող մի գործընթաց է, որին մեզանից յուրաքանչյուրը թե՛ այսօր, թե՛ վաղը պետք է իր մասնակցությունն ունենա: Քանզի բոլորիս նպատակը հզոր ու զարգացող հայրենիք ունենալն է: Եվ ես վստահ եմ, որ որևէ փորձություն ու դժվարություն չեն կարող խաթարել մեր երկրի հաստատուն ընթացքը:

Կրկին շնորհավորելով Անկախության տոնի առթիվ՝ բոլորիս մաղթում եմ եռանդուն և արգասաբեր աշխատանք՝ հանուն մեր պետության հզորացման ու մեր ժողովրդի բարեկեցության:

Կեցցե՛ անկախ Հայաստանի Հանրապետությունը:

Կեցցե՛ Հայաստանի Հանրապետության քաղաքացին:

